ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի
2025 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի
թիվ 9 արձանագրության թիվ 4 որոշմամբ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատասխանատու ստորաբաժանում	Համապատասխանության ապահովման ծառայություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	06.11.2025
Տարածում	«Այդի Բանկ» ՓԲԸ բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	Սույն քաղաքականությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 2024 թվականի օգոստոսի 23-ի նիստի թիվ 6 արձանագրության թիվ 10 որոշմամբ հաստատված «Բանկի հակակոռուպցիոն» քաղաքականությունը
Առնչվող փաստաթղթեր	ՀՀ Քրեական օրենսգիրք «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք ՀՀ ԿԲ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 3. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱՆԱԿՆԵՐԸ 4
ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԿԱԾԱՌՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 7
ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՈՒՄ 9
ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 10

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն քաղաքականության նպատակն է՝ սահմանել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում շահերի բախման և հակակոռուպցիոն քաղաքականության սկզբունքները և դրանց կիրառման մոտեցումները:
2. «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հավատարիմ է էթիկապես կայուն բիզնեսի վարման սկզբունքներին, ինչն էլ ամրագրվում է սույն քաղաքականությամբ և նպատակ ունի՝
    1) սահմանել Բանկի ղեկավարության դիրքորոշումը կոռուպցիայի հնարավոր դեպքերի առաջացման ռիսկերի և դրանց կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև սահմանել Բանկի և Բանկի աշխատակիցների կողմից անընդունելի վարքագիծն ու աշխատելաոճը,
    2) հստակեցնել վարքագծի այն տեսակները, որոնք կարող են առաջացնել շահերի բախման և կոռուպցիոն դեպքեր կամ բարձրացնել դրանց տեղի ունենալու հավանականությունը,
    3) ապահովել, որպեսզի ֆինանսական և այլ ռեսուրսները Բանկում օգտագործվեն և ուղղվեն իրենց հիմնական գործառույթի ապահովմանը և աշխատակիցների կողմից չօգտագործվեն զուտ անձնական և շահադիտական նպատակներով,
    4) Բանկում խրախուսել ազնիվ և թափանցիկ աշխատելաոճը:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

3. Սույն քաղաքականությունում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝
    1) ***Բանկ*** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,
    2) ***Աշխատակից***՝ Բանկի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքած անձ (այդ թվում՝ Բանկի հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած աշխատակից) և Խորհրդի անդամներ,
    3) ***Կոռուպցիա***՝ պաշտոնեական լիազորությունների (դիրքի) չարաշահում՝ անձնական օգուտ ստանալու նպատակով,
    4) ***«Պասիվ» կաշառք*** մասնավոր ոլորտում կաշառք ստանալը՝ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողի կողմից՝ անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար,

5) ***«Ակտիվ» կաշառք***՝ ուղղակի կամ անուղղակի որևէ անհիմն առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տալը ցանկացած անձի, ով ղեկավարում կամ աշխատում է մասնավոր հատվածի կազմակերպության որևէ պաշտոնում, որպեսզի տվյալ անձը իր լիազորությունների/պարտականությունների խախտմամբ գործի կամ զերծ մնա որոշակի գործողություններ կատարելուց՝ կաշառք տվողի կամ նրա մատնանշած մեկ այլ անձի օգտին,
6) ***Շահերի բախում***՝ իրավիճակ, երբ Աշխատակիցն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել և հանգեցրել է կամ կարող է հանգեցնել Բանկի եկամուտների կրճատմանը կամ Բանկը այդ գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնաս,
7) ***Փոխկապակցված անձ***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կապված կամ փոխկապակցված անձ՝ անկախ միևնույն տնտեսություն վարելու հանգամանքից,
8) ***Հաճախորդ***՝ ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր), որը օգտվում է կամ օգտվել է Բանկի կողմից մատուցվող ծառայություններից, դիմում է կամ հնարավոր է, որ կդիմի դրանցից օգտվելու համար,
9) ***Գործընկերներ***՝ Բանկի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ մատակարար, կոնտրագենտ (այդ թվում՝ պոտենցիալ), ինչպես նաև Բանկի հետ գործարար հարաբերություն կնքած կամ պոտենցիալ գործընկեր,
10) ***Համբավի ռիսկ***՝ հավանականություն է, որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազման, Գործընկերների/Հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատման, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկման: Համբավի ռիսկը կարող է առաջացնել նաև իրացվելիության խնդիրներ, բաժնետոմսերի գների անկում և այլն:

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԱՆԱԿՆԵՐԸ

4. Հակակոռուպցիոն քաղաքականության կարգավորման առարկան ներառում է՝
   1) գործողությունների կամ վարքագծի շրջանակի սահմանումը, որը Բանկի տեսանկյունից կարող է դիտարկվել որպես կոռուպցիոն հատկանիշներ ունեցող գործողություն կամ վարքագիծ,
   2) Աշխատակիցների այն գործողությունների կամ վարքագծի նկարագրության սահմանումը, որն ընդունելի չէ Բանկի համար,
   3) Բանկում տեղեկատվության փոխանցման այնպիսի մեխանիզմների սահմանում, որոնք հնարավորություն կտան ժամանակին ու հստակ ստանալ տեղեկատվություն

կատարված (կամ պոտենցիալ) կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ՝ համարժեք քայլեր ձեռնարկելու համար,

4) Բանկում Աշխատակիցների շահերի բախման հնարավոր դեպքերի վաղաժամկետ բացահայտման/ինքնաբացարկի վարքագծի սահմանումը և դրանց ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը, ինչպես Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, այնպես էլ հավանական/պոտենցիալ շահերի բախման դեպքերի առաջացման ժամանակ,
5) Կատարված (կամ պոտենցիալ) կոռուպցիոն դրսևորման վերաբերյալ տեղեկատվության փոխանցման երկաստիճան մակարդակի կազմակերպումը՝ ապահովելով կոնֆիդենցիալություն: Նշված գործընթացի ապահովումն իրականացվում է սույն քաղաքականության 23-րդ կետում նկարագրված՝ բացահայտում և կանխարգելում փուլում:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Սույն քաղաքականությամբ սահմանված սկզբունքներն ու դրանց կիրառումը հանդիսանում են Բանկի համապատասխանության ռիսկի կառավարման գործընթացի անբաժանելի մասը:
6. Բանկի կողմից կոռուպցիոն դրսևորումների ու շահերի բախման հավանական ռիսկերի զսպման նպատակով առնվազն ապահովվում է՝
    1) Բանկի իրավասու մարմինների ներգրավվածությունը Բանկում որոշումների կայացման ու գործարքների կնքման գործընթացներում՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
    2) ռիսկերի գնահատման գործընթացների ներդրումը սույն քաղաքականությամբ սահմանված դեպքերում (այդ թվում՝ Բանկի համբավի, գործառնական, զեղծարարությունների ռիսկի),
    3) գործարքների թափանցիկության խելամիտ մակարդակի ապահովումը որոշումների կայացման բոլոր հնարավոր փուլերում,
    4) կատարված ծախսերի հաստատումը՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների,
    5) որոշումների կայացման, իրավասությունների տրամադրման գործընթացների կարգավորումը, ինչպես նաև շահերի բախման հնարավոր դեպքերի բացառումը/խուսափումը նշված գործընթացներում,
    6) առկա ու հավանական գործընկերների պատշաճ ուսումնասիրություն (due diligence), այդ թվում՝ մինչև գործարար հարաբերությունների հաստատումը կատարված ուսումնասիրությունների իրականացում, դրանց արդյունքների գրանցում ու պահպանում, իսկ համագործակցության ընթացքում՝ պարբերական ուսումնասիրություններ, դրանց արդյունքների գրանցում ու պահպանում՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,

7) կաշառքի կամ շահերի բախման դեպքերի մասին տեղեկացումների մեխանիզմների ներդրումը՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
8) սույն քաղաքականության դրույթների վերանայումը և ծանուցումը Բանկի Աշխատակիցներին՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների,
9) Աշխատակիցների համար պարբերաբար ուսուցումների կազմակերպումը:

7. Կաշառքի հավանական դեպքը կարող է առիթ դառնալ քրեական վարույթի նախաձեռնմանը կամ ֆինանսական համակարգը կարգավորող մարմնի ստուգումների, որոնք էլ հնարավոր է առաջացնեն նախազգուշացումներ, տուգանքներ կամ բիզնեսի համար այլ ծախսեր, ինչպես նաև Բանկի համբավի ռիսկի մակարդակի աճ: Ֆիզիկական անձինք, ովքեր ներգրավված են կաշառքի հետ կապված գործառնությունների մեջ, հավանական է, որ կենթարկվեն քրեական պատասխանատվության:
8. Բանկը չի հանդուրժում կաշառքի որևէ դրսևորում և, հետևաբար, Բանկի քաղաքականությունն ուղղված է՝
   1) կաշառքի ստացման կամ տրամադրման, ինչպես նաև շահերի բախման հնարավոր դեպքերի բացառմանը,
   2) կաշառքի ստացման կամ տրամադրման, ինչպես նաև շահերի բախման հնարավոր դեպքերի հանգամանորեն ուսումնասիրմանը և ցանկացած նման դեպքի մասին համապատասխան իրավասու մարմիններին հաղորդմանը/տեղեկացմանը:
9. Բանկում ցանկացած որոշում պետք է կայացվի ՀՀ օրենսդրության, սույն քաղաքականության դրույթներին, Բանկի այլ ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
10. Աշխատակիցներին ցանկացած պարագայում արգելվում է անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոցներ, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար: Բանկի համար անընդունելի են որևէ մեկի օգտին որևէ գործողություն կատարելու համար նվերների ստացումը, որի մասով առավել հստակ գործընթացները նկարագրված են Բանկի այլ ներքին իրավական ակտերով:
11. Աշխատակցին արգելվում է նաև ուղղորդել Բանկի այլ Աշխատակիցներին կամ հաճախորդներին ու երրորդ անձանց՝ անձամբ կամ այլ անձանց միջնորդությամբ առաջարկել, տալ, խոստանալ, պահանջել և ստանալ կաշառք՝ հօգուտ իր հետ փոխկապակցված անձանց: Աշխատակցին արգելվում է բանկային կամ առևտրային գաղտնիք պարունակող, ինչպես նաև Բանկի բնականոն գործունեությանն առնչվող, սակայն ոչ հանրամատչելի տեղեկատվության որևէ տարբերակով հրապարակումը կամ այլ անձին/անձանց հայտնելը:
12. Աշխատակիցներին արգելվում է իրենց ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը, մասնավորապես, Աշխատակցի կողմից օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները կամ դրանցով

պայմանավորված ազդեցությունն ի վնաս Բանկի շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ Բանկի իրավունքներին, օրինական շահերին:

13. Աշխատակիցները կրում են անձնական պատասխանատվություն, բոլոր այն դեպքերի համար, երբ իրենց անձնական հետաքրքրությունը կամ շահն ազդում է կամ կարող է ազդել իրենց գործողությունների օբյեկտիվության, մասնագիտական դատողությունների, օրինականության վրա և/կամ ուղղակի կերպով հակասել է կամ կարող է հակասել Հաճախորդների, Գործընկերների շահերին:
14. Աշխատակիցները տեղեկացված են, որ համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի՝ կաշառք տալը և կաշառք ստանալը, ինչպես նաև կաշառքի միջնորդությունըհանդիսանում է քրեորեն պատժելի արարք:
15. Աշխատակիցներին արգելվում է շահադիտական նպատակներով այլ անձանց հայտնել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կիրառվող սակագների շրջանցման հնարավոր տարբերակների մասին:
16. Աշխատակիցներին արգելվում է շահադիտական նպատակներով այլ անձանց հայտնել, կամ անձամբ օգտագործելը, իրենց հայտնի դարձած հավանական տեխնիկածրագրային բացերը, ծրագրային հնարավորությունները շրջանցելու տարբերակները:
17. Աշխատակիցներին արգելվում է Հաճախորդներին առաջարկել կամ Հաճախորդների հետ կնքել այնպիսի արհեստական գործարքներ, որոնք միտված են իրենց կատարողական ցուցանիշների ապահովմանը և չեն բխում Բանկի շահերից:
18. Բանկն ակնկալում է, որ Բանկի Հաճախորդները և Գործընկերները ևս պետք է պահպանեն են շահերի բախման և կոռուպցիայի կանխարգելման ընդունելի սկզբունքները և պետք է առաջնորդվեն էթիկապես ազնիվ բիզնեսի վարման կանոններով:
19. Բանկը չի ֆինանսավորում կամ որևէ այլ կերպ չի աջակցում քաղաքական կուսակցություններին, այդ թվում՝ քաղաքական պաշտոնի թեկնածուներին, նրանց նախընտրական արշավներին կամ քաղաքական այլ միջոցառումներին կամ որևէ քաղաքական ուղղվածություն ունեցող կազմակերպությանը կամ շարժմանը:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԿԱԶԱՌՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

20. Բանկում արգելված է «Ակտիվ» և «Պասիվ» կաշառքի ցանկացած դրսևորումը՝ անկախ դրա փաստացի վճարելու հանգամանքից:
21. Սույն քաղաքականության իմաստով կոռուպցիոն դրսևորում է համարվում՝
    1) Ցանկացած արտոնություն, դրանք են՝
        ա. շահադիտական դրդումներով կատարված պաշտոնեական լիազորությունների (դիրքի) չարաշահման արդյունքում որևէ տեսակի չհիմնավորված և չթույլատրված ֆինանսական օգնության կամ այլ կերպ արտոնության տրամադրումը կամ ստացումը, կամ դրանց առաջարկելը կամ առաջարկի ստացումը,

բ. ստացված նյութական արժեքներ՝ անկախ դրա ձևից՝ կանխիկ թե կանխիկին համարժեք (օրինակ՝ նվեր քարտի տեսքով), կամ անկանխիկ առավելություններ, ինչպիսիք են՝ նվերները, տարատեսակ ծառայություններից օգտվելու հնարավորության անօրինական ստացման, տույժ-տուգանքներից անօրինական կերպով ազատվելու հնարավորությունը, որևէ պարտավորության կատարման անօրինական զիջումը և այլն: Ընդ որում, սույն քաղաքականությունից կարող են բացառություն կազմել այն նվերները, որոնց ստացումը թույլատրվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

2) ցանկացած այլ տեսակի գործողություն, որը ՀՀ օրենսդրությամբ կարող է դիտարկվել որպես կաշառքի դրսևորում:

22. Բանկում շահերի հնարավոր բախման դրսևորումներն են՝

1) Բանկի Հաճախորդի կամ Հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության հայտնումը երրորդ անձանց, այդ թվում՝ բանկային կամ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փոխանցումը որոշակի անձնական ստացված կամ ակնկալվող օգուտների դիմաց,
2) Բանկի և Հաճախորդի միջև, երբ գործարքների ձևակերպումը կամ դրանց առաջարկը կատարվում է ոչ շուկայական առաջարկի կամ հրապարակային օֆերտայի գնով/արժեքով/պայմաններով, այլ ուրիշ գնով/արժեքով/պայմաններով՝ ի շահ կամ ի վնաս Բանկի, որի հետևում ընկած են Աշխատակցի/ների անձնական օգուտներ ստանալու նեղ անձնական շահերը,
3) Բանկի Հաճախորդի և Աշխատակցի միջև, այդ թվում՝ երբ գործարար հարաբերության որևէ փուլում Աշխատակցի կողմից մեկ Հաճախորդի տրվում է առավելություն՝ ի վնաս մեկ այլ Հաճախորդի շահերի,
4) Բանկի և Աշխատակցի միջև, այդ թվում՝ Աշխատակիցների կողմից իրենց անձնական շահերին ուղղված՝ աշխատանքային պարտականությունների չարաշահման կամ գաղտնի տեղեկատվության բացահայտման դեպքերը,
5) Շահերի բախման այլ տեսակներ՝ սկսած բանկային գործառնությունների կատարումից մինչև գաղտնի տեղեկատվության բացահայտման դեպքերը, երբ փաստացի ապացուցվում է շահերի բախման դեպքը:

23. Սույն քաղաքականության կիրառման նպատակով Բանկում իրականացվող գործընթացները կատարվում են հետևյալ փուլերով՝

1) **Բացահայտում և կանխարգելում**, այդ թվում՝ Գործընկերների գործարար համբավի ուսումնասիրություն՝ նախքան գործարար հարաբերության հաստատելը, նոր աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվության հասանելի աղբյուրներից ստացված տեղեկությունների պատշաճ ուսումնասիրություն՝ նախքան աշխատանքային պայմանագիր կնքելը, Աշխատակիցների համար պարբերաբար տեղեկատվական նյութերի կազմումը և ուղարկումը՝ ապահովելու համար վերջիններիս տեղեկացվածությունը սույն քաղաքականության և Բանկի այլ ներքին ակտերի դրույթներին, ըստ անհրաժեշտության՝ Աշխատակիցների կողմից կամ վերջիններիս օգտին կատարված գործարքների ընտրանքային ուսումնասիրությունների նախաձեռնում,

2) **Գնահատում**, այդ թվում՝ ստացված տեղեկատվության հիմնավոր լինելու փաստից մինչև դեպքի հանգամանքների պատշաճ ուսումնասիրություն, համապատասխան առաջարկությունների կազմում՝ կոլեգիալ որոշմամբ, դրանց վերաբերյալ Բանկի իրավասու մարմնին տեղեկատվության ներկայացում,
3) **Կարգավորում**, այլ թվում՝ բացահայտված դեպքի հետ կապված հնարավոր լուծման ու կանոնակարգման բոլոր պահանջվող գործողությունների կազմակերպում, դեպքի հետ կապված փաստաթղթերի, նամակագրությունների ու նյութերի հավաքագրում և պահպանում՝ «Գաղտնի» մակնշմամբ:

24. Բացահայտում և կանխարգելում փուլի ապահովման պատասխանատուն Բանկում բոլոր ստորաբաժանումներն են՝ իրենց կողմից նախաձեռնված գործառնությունների շրջանակներում: Ընդ որում, սույն քաղաքականությամբ սահմանված հատկանիշներով շահերի բախման կամ կոռուպցիայի որևէ դրսևորման կամ հավանական դրսևորման ազդակների ստացման դեպքում Աշխատակիցը պարտավոր է գրավոր հայտնել իր անմիջական ղեկավարին՝ նկարագրելով դեպքի մանրամասները: Ընդ որում, եթե շահերի բախման կամ կոռուպցիայի որևէ դրսևորման կամ հավանական դրսևորման կողմերից մեկը հանդիսանում է Աշխատակցի անմիջական ղեկավարը, ապա Աշխատակիցը նշված տեղեկատվությունը փոխանցում է ավելի բարձր ղեկավարին:
25. Գնահատման և կարգավորման փուլերն իրականացվում են Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխանության ապահովման գործառույթների շրջանակում:
26. Գործընկերները Բանկի հետ գործարար հարաբերություններ ստեղծելիս պայմանագրով ամրագրվում է և պարտավորվում են ծանոթանալ և հաստատել, որ ծանոթացել են սույն քաղաքականության պահանջներին և տեղյակ են, որ գործընկերային հարաբերություններում որևէ կոռուպցիոն ռիսկի դրսևորում կարող է հանգեցնել ինչպես գործընկերային հարաբերությունների դադարեցմանը, այնպես էլ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:
27. Բանկի կողմից սույն քաղաքականության 26-րդ կետից կարող են բացառություններ սահմանվել այն դեպքերում, երբ գործընկերոջ հետ կնքվող պայմանագրում 26-րդ կետի պահանջի ամրագրման ուղղված ջանքերը համապատասխան արդյունք չեն ապահովել և տվյալ պայմանագրի կնքումը էական ազդեցություն ունի Բանկի գործունեության համար: Բացառություն կարող է սահմանվել նաև թղթակից բանկերի, վարկավորման ոլորտում ֆինանսավորում տրամադրող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների (ֆոնդերի) և միջազգային խոշոր գործընկերների համար, եթե տվյալ գործընկերները իրենց մոտ ունեն ներդրած հակակոռուպցիոն քաղաքականություն:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՈՒՄ

28. Բանկում յուրաքանչյուր տարի կատարվում է հավանական կոռուպցիոն ռիսկի գնահատում:
29. Հավանական կոռուպցիոն ռիսկը գնահատվում է ստորև թվարկված իրար հաջորդող 6 գործողությունների հիման վրա
    1) Բանկի խորհուրդը, և գործադիր մարմինը ապահովում են կոռուպցիոն ռիսկի գնահատման և բացահայտման գործընթացի իրականացման համար բավարար

ռեսուրսների առկայություն և իրականացնում են հետևողական հսկողություն կոռուպցիոն ռիսկի բացահայտման և գնահատման գործընթացի արդյունավետ և անխափան իրականացման նկատմամբ:

2) Համապատասխանության ապահովման ծառայությունը պլանավորվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացը, և առանձին հավանական կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ կատարվում են վերլուծություններ: Արդյունքում դատողությունների հիման վրա դուրս են բերվում հավանանական կոռուպցիոն ռիսկերը, դրանց տեսակները և տեղի ունենալու հավնական վայրը:
3) Հավաքագրվում է բավարար տեղեկատվություն՝ պարզելու համար, թե Բանկի գործունեության ընթացքում, որ ոլորտներում և ինչ եղանակներով կարող է դրսևորվել կաշառք տալու կամ ստանալու վարքագիծ: Տեղեկատվությունը ստացվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից, և վերլուծության ընթացքում հաշվի է առնվում անցյալում այդ հարցին առնչվող գործնական փորձը:
4) Ստեղծվում է կոռուպցիայի կամ հնարավոր կաշառակերության բնորոշ ռիսկերի, ռիսկի գործոնների և կաշառակերության սխեմաների համապարփակ գրանցամատյան: Գրանցամատյանը կազմվում է սույն կետի նախորդ 3 ենթակետերում(փուլերում) հավաքագրված տեղեկատվության հիման վրա և գնահատվում է Բանկի գործունեության, որ տեսակները կարող են ենթարկվել կաշառակերության ռիսկերին և որոնք են այն ռիսկի գործոնները, որոնք կարող են նպաստել կաշառակերության առաջացման հավանականության բարձրացմանը:
5) Գնահատվում և առաջնահերթություն է տրվում սույն կետի 4-րդ ենթակետերում (փուլում) արտացոլված հավանական կոռուպցիոն և կաշառակերության յուրաքանչյուր ռիսկին: Դիտարկվում են ինչպես տվյալ ռիսկերի առաջացման հավանականությունը, այնպես էլ դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Կախված տվյալ ռիսկի բնույթից՝ այս փոփոխականները կարող են արտահայտվել քանակական կամ որակական առումով, կամ երկուսի համադրությամբ:
6) Ռիսկերի գնահատման արդյունքները հիմք են ընդունվում Բանկի կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի մշակման համար, այդ թվում Բարձր ռիսկի գործոններ պարունակող ոլորտների, կամ գործառույթների առավել մանրամասն ուսումնասիրման և Բանկում դրանց մասով հսկողության մեխանիզմների արդիականացման և խստացմանն ուղղված միջոցառումների պլանի կազմման համար:

30. Սույն քաղաքականության 28-րդ և 29-րդ կետերի համաձայն հավանական կոռուպցիոն ռսկերի գնահատումը կատարվում է Բանկի Համապատասանության ապահովման ծառայության կողմից յուրաքանչյուր տարի՝ մինչև հոկտեմբերի 30-ը:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

31. Հավանական կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները, դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը կազմվում են Համապատասխանության ապահովման

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ծառայության կողմից և ներկայացվում Բանկի վարչության նիստի հաստատմանը: Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 30-ը այն ներառվում է Բանկի խորհրդին կից ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտեի օրակարգ՝ Բարձր ռիսկի դասակարգում ունեցող հավանական կոռուպցիոն ռիսկերի ներկայացման և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանի քննարկման նպատակով:

32. Սույն քաղաքականության 31-րդ կետում նշված քննարկումից հետո հավանական կոռուպցիոն ռիսկի գնահատման արդյունքները և դրանց նվազեցման ուղղված միջոցառումների ծրագիրը Ներկայացվում է Բանկի խորհրդին ի գիտություն:
33. Փաստացի կատարված կոռուպցիոն դեպքերի հայտնաբերման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Խորհրդին՝ անկախ դեպքի հանգամանքներից, գումարի մեծությունից և ազդեցության չափից:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է